Հիշարժան Սուրբ Զատիկ

Ալելիե Կորոնել-Կամիտան
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Ֆինլանդիայում:

Ջոնասը ծիծաղում էր, մինչ եղբայրների հետ վազում էին հյուրասենյակ՝ մասնակցելու ընտանեկան երեկոյին: Նա դեռ զգում էր Զատիկի ընթրիքի համեղ տապակած գառան հոտը: Եվ նա դեռ զգում էր քաղցր պաշայի՝ նրանց ավանդական Զատիկի աղանդերի համը:

Երբ ընտանիքը հանգիստ նստեց, Ջոնասի ավագ եղբայրը՝ Տրիստանը, ոտքի կանգնեց:

«Շնորհավոր Սուրբ Զատիկ», - ասաց Տրիստանը: Նա սկսեց իրենց ընտանեկան երեկոն երգով և աղոթքով: Հետո եկավ նրանց հատուկ երաժշտական ծրագրի ժամանակը: Յուրաքանչյուրը պատրաստել էր երգ Հիսուս Քրիստոսի մասին, որով պետք է կիսվեր:

Տրիստանը կիթառ էր նվագում՝ յուրաքանչյուր լարի վրա զգուշորեն ծնգծնգացնելով: Հետո դաշնամուր նվագեց նրա եղբայրը՝ Էյնարը: Նրա մատները շարժվեցին ստեղների վրայով: Մայրիկը, հայրիկը և Ջոնասի մյուս եղբայրները նույնպես երգեր նվագեցին: Ջոնասը սիրով լսում էր իր ընտանիքի երաժշտությունը:

Վերջապես եկավ Ջոնասի հերթը: Նա խոր շունչ քաշեց և սկսեց երգել:

«Երբեմն գայթակղվում եմ սխալ ընտրություն կատարել, բայց փորձում եմ լսել մեղմ ձայնը, որ շշնջում է. «Սիրեք միմյանց, ինչպես Հիսուսն է սիրում ձեզ»:*

Մինչ Ջոնասը երգում էր, նրա սիրտը լցվեց սիրով: Նրա աչքերը լցվեցին երջանկության արցունքներով: Այնպիսի զգացողություն էր, կարծես Սուրբ Հոգին ասում էր Ջոնասին, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են իրեն:

«Շնորհակալ եմ բոլորիդ՝ ձեր տաղանդներով կիսվելու համար», - ասաց հայրիկը: Նա ցուցադրեց մի նկար: Այնտեղ պատկերված էր Հիսուս Քրիստոսը, որ ծառի կողքին ծնկի էր եկել և աղոթում էր: «Ո՞վ գիտի, թե ինչ է կատարվում այս նկարում»:

Ջոնասը բարձրացրեց ձեռքը: «Դա Հիսուսն է, որն աղոթում է Գեթսեմանիում»:

Հայրիկը գլխով արեց: «Այո: Այդտեղ էր, որ Նա զգաց մեր բոլոր ցավերն ու տխրությունները»:

Պաշան քաղցր կրեմով աղանդեր է: Դուք ունե՞ք Զատիկի հյուրասիրություն, որն ամեն տարի վայելում եք:

*“I’m Trying to Be like Jesus” (*Children’s Songbook*, 78)

«Իր մահից առաջ Նա գնաց Գեթսեմանի պարտեզ», - ասաց մայրիկը: «Իր մահից հետո Նա կրկին ապրեց: Այդ բոլորը Նրա Քավության մասն է: Հիսուսն արեց այս ամենը, քանի որ Նա սիրում է մեզ»:

Մայրիկը միացրեց առաջին Զատիկի վերաբերյալ մի տեսանյութ: Երբ տեսանյութն ավարտվեց, բոլորը մի պահ լուռ էին: Ջոնասը կրկին զգաց Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սերը:

«Այժմ մեր միջոցառման ժա՞մն է»: հարցրեց Ջոնասը:

Մայրիկը բարձրացավ բազմոցից և մոտեցավ դարակին: «Այո: Ջոնաս, կօգնե՞ս ինձ»:

Ջոնասը և մայրիկը հանեցին սոսինձ, մկրատ և Եկեղեցու ամսագրերի մի կույտ: Նրանք այդ ամենը տարածեցին հատակին: Ապա մայրիկը յուրաքանչյուրին տվեց Զատիկի իրենց հատուկ օրագիրը: «Եկեք Զատկի կապակցությամբ Հիսուս Քրիստոսի նկարներ փակցնենք մեր օրագրերում»:

Ջոնասը նստեց հատակին և բացեց իր օրագիրը:

Հայրիկը վերցրեց գրիչ՝ իր օրագրում գրելու համար: «Ձեր նկարների կողքին դուք կարող եք գրել, թե ինչ եք անելու Երկնային Հորը և Հիսուսին հետևելու համար, որպեսզի կարողանաք ավելի նմանվել Նրանց»:

Ջոնասը թերթում էր ամսագրերից մեկը: Նա գտավ մի նկար, որտեղ Հիսուս Քրիստոսը ժպտում էր:

Ջոնասը կտրեց նկարը և փակցրեց իր օրագրի էջի կենտրոնում: Նա մտածում էր այն մեծ սիրո մասին, որ այդ օրը զգացել էր Փրկչի կողմից: Այնուհետև նա գրեց. «Ես կհետևեմ Երկնային Հորը և Հիսուսին՝ լսելով հայրիկին ու մայրիկին և օգնելով տնային գործերում: Ես ավելի շատ կսիրեմ եղբայրներիս»: Նա բարձրացրեց այն, որպեսզի ցույց տա մայրիկին: Նա կարդաց նրա գրածը և ժպտաց:

Ջոնասը երկար ժամանակ հիշելու էր այս Զատիկը: Նա զգաց Հիսուս Քրիստոսի սերը, երբ երգեց և սովորեց Նրա մասին: Եվ նա զգաց Հիսուսի սերը, երբ փորձեց նմանվել Նրան:

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը իսկապես սիրում էին Ջոնասին: Եվ Ջոնասը նույնպես սիրում էր Նրանց: ●

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍՏԵԼԻՅԱՆԱ ԴՈՒԵՎԱՅՐ